



*Համարը* N 41-Ն  
*Տիպը* Որոշում  
*Սկզբնաղբյուրը* ՀՀԳՏ 2004.05.17/12(160)  
Հոդ. 146

*Ընդունող մարմինը* Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

*Ստորագրող մարմինը* Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ

*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 27.05.2004

*Տեսակը* Ինկորպորացիա  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունման ամսաթիվը* 14.04.2004

*Ստորագրման ամսաթիվը* 14.04.2004

*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**+** Կապեր այլ փաստաթղթերի հետ

**+** Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՅԼ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂՆԵՐԻ) ԿԱՄ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԱՅԼ ՑԱՆՑԵՐԻ ՍՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՊԱՌՈՂԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԶԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Գրանցված է»*  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
6 մայիսի 2004 թ.  
Պետական գրանցման թիվ 60004104

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

14 ապրիլի 2004 թ.  
ք. Երևան

N 41-Ն

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՅԼ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂՆԵՐԻ) ԿԱՄ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԱՅԼ ՑԱՆՑԵՐԻ ՍՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՊԱՌՈՂԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԶԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հաստատել «Այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայության վճարների չափի հաշվարկման մեթոդիկան» (հավելված):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի փետրվարի 13-ի «Ենթասպառողների էլեկտրամատակարարման ապահովման համար սպառողի մատուցած ծառայության վճարների հաշվարկի մեթոդիկայի մասին» N 6 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
նախագահ**

**Ռ. Նազարյան**

**Հավելված  
ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2004 թվականի ապրիլի 14-ի N 41-Ն որոշման**

**Մ Ե Թ Ո Ղ Դ Ի Կ Ա**

**ԱՅԼ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂՆԵՐԻ) ԿԱՍ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԱՅԼ ՑԱՆՑԵՐԻ ՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՄՊԱՌՈՂԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ**

Սույն մեթոդիկան սահմանում է էլեկտրամատակարարող ընկերության (այսուհետև՝ մատակարար) կողմից սպառողի էլեկտրակայանքներով այլ սպառողներին (ենթասպառողներ կամ մատակարարի այլ ցանցեր) սնելու համար սպառողի մատուցած ծառայության վճարների ամսական չափի (այսուհետև՝ ծառայության վճարի չափ) հաշվարկման կարգը:

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 Մատակարարի կողմից հատուցման ենթակա են սպառողի կատարած այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջանում են այլ սպառողների էլեկտրամատակարարումն ապահովելու նպատակով տվյալ սպառողի սեփականությունը հանդիսացող կամ տնօրինության տակ գտնվող էլեկտրակայանքների շահագործման ընթացքում:

Մատակարարի կողմից սպառողին փոխհատուցում չի տրվում և սույն մեթոդիկայի 2.1 կետի համաձայն հաշվարկվող C գումարն ընդունվում է հավասար զրոյի, եթե մատակարարը նախորդ ամսվա ընթացքում դիմել է սպառողին՝ ենթասպառողի էլեկտրամատակարարման դադարեցման համար:

**(1.1-ին կետը խմբ. 16.11.11 N 539-Ն)**

1.2 Սույն մեթոդիկայի համաձայն հաշվարկված ծառայության վճարի չափին անհամաձայնությունը չի կարող հիմք հանդիսանալ այլ սպառողների էլեկտրամատակարարման դադարեցման համար:

**2. ՄՊԱՌՈՂԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ**

2.1 Այլ սպառողներին սնելու համար սպառողի մատուցած ծառայության վճարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$C=A+K (1)$$

որտեղ՝

C ծառայության վճարի չափն է (դրամ/ամիս՝ առանց ԱԱՀ-ի),

A այլ սպառողների էլեկտրամատակարարման նպատակով սպառողի էլեկտրակայանքների սպասարկման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսերի մեծությունն է (դրամ/ամիս),

K այլ սպառողների էլեկտրամատակարարման հետևանքով սպառողի տրանսֆորմատորում և գծերում առաջացող կորուստների դիմաց փոխհատուցվող ամսական գումարն է (դրամ/ամիս):

2.2 Այլ սպառողների էլեկտրամատակարարման նպատակով սպառողի էլեկտրակայանքների սպասարկման համար առաջացող լրացուցիչ ծախսերի մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = a_1 \times (n_1+n_2/2)+a_2 \times (n_3+n_4/2)+W_{\text{էլք}} \times (a_3+a_4+a_5+a_6+a_7) (2)$$

որտեղ՝

- a<sub>1</sub> 1 բջջի օգտագործման համար, դրա շահագործման նպատակով, սպառողին փոխհատուցվող ծառայության վճարի չափն է (7537 դրամ/ամիս՝ առանց ԱԱՀ-ի),
- n<sub>1</sub> 110, 35, 6(10) կՎ լարման ենթակայաններում միայն այլ սպառողների էլեկտրամատակարարման ապահովման նպատակով օգտագործվող բջիջների գումարային քանակն է,
- n<sub>2</sub> 110, 35, 6(10) կՎ լարման ենթակայաններում սպառողի և այլ սպառողների էլեկտրամատակարարման ապահովման նպատակով համատեղ օգտագործվող բջիջների ընդհանուր քանակն է,
- a<sub>2</sub> 1 միացման կետի օգտագործման համար, դրա շահագործման նպատակով, սպառողին փոխհատուցվող ծառայության վճարի ամսական չափն է (409 դրամ/ամիս՝ առանց ԱԱՀ-ի),
- n<sub>3</sub> 0,4 (0,23) կՎ լարման միացման կետերում միայն այլ սպառողների էլեկտրամատակարարման ապահովման նպատակով օգտագործվող միացման կետերի քանակն է,
- n<sub>4</sub> 0,4 (0,23) կՎ լարման միացման կետերում սպառողի և այլ սպառողների էլեկտրամատակարարման ապահովման նպատակով համատեղ օգտագործվող միացման կետերի քանակն է,
- W<sub>նիթ</sub> սպառողի կողմից այլ սպառողներին հաղորդված ամսական էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտժ), որը հաշվառվում է այլ սպառողների առևտրային հաշվառքի սարքերով,
- a<sub>3</sub> 110 կՎ լարման ենթակայաններում, սպառողի փոխակերպիչների շահագործման նպատակով, 1 կՎտժ էլեկտրաէներգիայի փոխակերպման ծառայության վճարի չափն է (0,756 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի),
- a<sub>4</sub> 35 կՎ լարման ենթակայաններում, սպառողի փոխակերպիչների շահագործման նպատակով, 1 կՎտժ էլեկտրաէներգիայի փոխակերպման ծառայության վճարի չափն է (1,355 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի),
- a<sub>5</sub> 6(10) կՎ լարման ենթակայաններում, սպառողի փոխակերպիչների շահագործման նպատակով, 1 կՎտժ էլեկտրաէներգիայի փոխակերպման ծառայության վճարի չափն է (1,523 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի),
- a<sub>6</sub> սպառողի 6(10) կՎ լարման էլեկտրահաղորդման գծերի շահագործման նպատակով 1 կՎտժ էլեկտրաէներգիայի տեղափոխման ծառայության վճարի չափն է (0,730 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի),
- a<sub>7</sub> սպառողի 35 կՎ և 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծերի շահագործման նպատակով 1 կՎտժ էլեկտրաէներգիայի տեղափոխման ծառայության վճարի չափն է (1,295 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի):

**(2.2-րդ կետը փոփ. 16.11.11 N 539-Ն, 20.12.17 N 568-Ն)**

2.3 Սպառողի կողմից այլ սպառողների էլեկտրամատակարարման նպատակով մեկից ավելի ենթակայաններ կամ էլեկտրահաղորդման գծեր օգտագործվելու դեպքում սույն մեթոդիկայի 2.2 կետով նախատեսված A մեծությունը յուրաքանչյուր ենթակայանի կամ էլեկտրահաղորդման գծի համար հաշվարկվում է առանձին, որը սույն կետի N 1 աղյուսակում ամրագրված սահմանային արժեքները գերազանցելու դեպքում ընդունվում է հավասար N 1 աղյուսակում ամրագրված արժեքներին:

**N 1 աղյուսակ**  
դրամ/ամիս (առանց ավելացված արժեքի հարկի)

Սպառողի սպառման համակարգի լարումը	Սպառողի ենթակայանի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը	Սպառողի էլեկտրահաղորդման գծերի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը
6(10) կՎ	84 794	15 703
35 կՎ	339 175	26 694
110 կՎ	678 350	28 265

**(2.3-րդ կետը խմբ. 16.11.11 N 539-Ն, 20.12.17 N 568-Ն)**

2.4. Այլ սպառողների էլեկտրամատակարարման հետևանքով սպառողի տրանսֆորմատորներում և էլեկտրահաղորդման գծերում առաջացող կորուստները փոխհատուցող գումարը (K) հաշվի է առնվում բանաձևում, եթե դրանք ներառվում են սպառողի կողմից վճարման ենթակա էլեկտրաէներգիայի քանակության մեջ: Այն որոշվում է հետևյալ բանաձևով:

$$K = W_{\text{էնթ}} \times T \times (a_8 + a_9) / (100 - a_8 - a_9) \tag{3}$$

որտեղ՝  
T - սպառողի համար էլեկտրաէներգիայի սակագինն է (ցերեկային, դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի)։

a<sub>8</sub> - կորուստներն են տրանսֆորմատորներում (տոկոսային արտահայտությամբ), որոնք ընդունվում են հավասար 1,3-ի, եթե սպառողը սնվում է 6 կՎ և բարձր լարման ցանցերից։

a<sub>9</sub> - կորուստներն են գծերում (տոկոսային արտահայտությամբ), որոնք ընդունվում են հավասար 1-ի, եթե ենթասպառողը սնվում է 6 կՎ և բարձր լարման ցանցերից և 3-ի, եթե ենթասպառողը սնվում է 0,4 կՎ և ցածր լարման ցանցերից։

*(2.4-րդ կետը փոփ. 16.11.11 N 539-Ն, խմբ. 06.11.13 N 381-Ն)*

*2.5 (2.5-րդ կետն ուժը կորցրել է 16.11.11 N 539-Ն)*

2.6 Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը վերանայում է սույն մեթոդիկայի 2.2 կետում նշված ծառայությունների վճարները և 2.3 կետի N 1 աղյուսակում նշված սահմանային մեծությունները՝ դրանց նկատմամբ կիրառելով ընթացիկ տարվա սեպտեմբեր ամսվա սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ։ Վերանայման արդյունքում սահմանված մեծությունները ուժի մեջ են մտնում տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից։

*(2.6-րդ կետը լրաց. 20.12.17 N 568-Ն)*

2.7 Սույն մեթոդիկայի 2.6 կետն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից։

*(2.7-րդ կետը լրաց. 20.12.17 N 568-Ն)*

*(հավելվածը խմբ., փոփ. 16.11.11 N 539-Ն, խմբ. 06.11.13 N 381-Ն, փոփ., խմբ., լրաց. 20.12.17 N 568-Ն)*